ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«22» հունվարի 2024 թ. No 2/1-9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Էլ ընդ Էվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1**

Մասնակից՝ **«Էլ ընդ Էվ» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 00522502, գործունեության հասցե՝ ք. Երևան, Երկաթուղայիններ 4 փ. 2/6/

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով 22.12.2023թ. հայտարարվել է ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «Էլ ընդ Էվ» ՍՊԸ-ն: Վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերին բացարձակապես, ներկայացված է եղել այլ մրցույթի փաստաթուղթ, իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը բացակայել է: Գնահատող հանձնաժողովը 09.01.2024թ.-ին կայացած նիստում «Էլ ընդ Էվ» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել ներկայացված փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել փաստաթղթերը:

11.01.2024թ. թիվ 3 որոշմամբ հանձնաժողովի անդամների կողմից իրականացրած գնահատման արդյունքում հանձանաժողովը որոշել է գնահատել անբավարար և մերժել «Էլ ընդ Էվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ՀՀ կառավարության 04.05.2022թ. N 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Էլ ընդ Էվ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Էլ ընդ Էվ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«Էլ ընդ Էվ» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ